



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մարտի 2013 թվականի N 232 - Ն

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ԻՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ 2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ, ԱՅԴ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԲՅՈՒՋԵՆ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո Ր Ո Շ ՈՒ Մ է.

1. Հաստատել՝

1) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման 2013-2016 թվականների ազգային ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման 2013-2016 թվականների ազգային ծրագրի առաջնահերթ միջոցառումների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման 2013-2016 թվականների ազգային ծրագրի բյուջեն՝ համաձայն N 3 հավելվածի.

4) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման 2013-2016 թվականների ազգային ծրագրի մոնիթորինգի և գնահատման պլանը՝ համաձայն N 4 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2013 թ. մարտի 19
Երևան

